

ԶՄՈՒՑՎԱԾ ԱՆՈՒՆՆԵՐ

ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ. ՃԱՆԱԳՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԹԱՐԳՄԱՆԻՉ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Սուրեն Ավչյանը ծնվել է Թիֆլիսում, 1904թ.-ին: Ստացել է նախ տարրական կրթություն, ապա ավարտել ժամանակի համընթաց կրթական հաստատություններից մեկը՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Պատանեկան հասակից գրում է բանաստեղծություններ: Առաջին անգամ տպագրվում է 1923թ.-ին, Թիֆլիսում հրատարակվող «Կարմիր ծիլեր» հայալեզու մանկա-պատանեկան հանդեսում: Այնուհետև նրա բանաստեղծությունները, թարգմանությունները, հոդվածները՝ վրաց եւ հայ գրողների մասին, տպագրվում են Հասարակական և Վրաստանի պարբերականներում: Հիշյալ թեմաների մասին բանավոր զեկուցումներով հանդես է գալիս նաև՝ այդ օրերին տարածում գտած բանվորական ակումբներում:



յաց երկիր Հայաստանը, ուստի երիտասարդ պոետին չեն կարող համակել մեծանկարիչի ու թախծի տրամադրությունները: Նա ոգեւորված է կյանքի հաղթական երթով: «Սիրում եմ, սիրում շքինդը կյանքի, Կյանքի եռուզեռ, երգի փոթորիկ»,- գրում է նա: Սուրեն Ավչյանի հեղինակի համար սիրո գագանունը սրբազան կրակ է, սերը չարն է ջնջում ու կործանում, որովհետև բարին է եւ՝ կյանքի հաստատումը (Սեր): Պոետի սերն ինքնանպատակ չէ, ընդհակառակը, նա ապրեցնող է, «կյանքի ջահերը վառող, իմ Հայրենիքի, իմ երկրի սերը բարձունքի հասցնող...»: Նրա սերը լիցքավորող սկիզբ է: Քանի նա սիրում է, նրան չի ընկճի ո՛չ կատաղի տարերքը, ո՛չ թշնամին, ո՛չ առջեւը բացվող անդունդը: Սուրեն Ավչյանը պրպտել է նաև թատերգության ժանրում, նա մի շարք պիեսների հեղինակ է, որոնք տարիներ շարունակ մեծ հաջողությամբ բեմադրվել են Թբիլիսիի Սո.Շահումյանի անվան (այսօր՝ Պ Ադամյան) պետհայրամայում: Այդ շարքից նշելի են՝ «Սոս և Վարդաթեր» (ըստ Պոռչյանի), «Քյոռ Օղլի», «Սայաթ-Նովա», «Պլը-Պուղի» թատերգությունները: Սակայն, Ավչյան ստեղծագործողի ներդրումը մեր գրականության մեջ չի սահմանափակվել բանաստեղծությամբ և թատերգությամբ: Առանձնապես գնահատելի

են Ս.Ավչյանի ջանքերը թարգմանության եւ հայ-վրացական մշակութային փոխհարաբերությունների ուսումնասիրության բնագավառներում, ինչով եւ նա մեծ ու շնորհակալ աշխատանք տարավ հայ-վրացական մշակութային կապերի ուղղությամբ: Թբիլիսիի պետական հայկական դրամատիկական թատրոնի բեմացանկում, խորհրդային տարիներին, մշտապես տեղ են գտել վրացական թատերգության լավագույն նմուշները Ս.Ավչյանի թարգմանությամբ: Այդպես, 1958-ին, մեր թատրոնում բեմադրվել են դրամատուրգներ Գ.Նախուցրիշվիլու եւ Դ.Ցխակաիայի «Սուրացկանի պատմածը» (ըստ Ի.Ճավճավաձեի) եւ Ս.Կիկվաձեի «Անձնագրի Դիմիտրի»: Սուրեն Ավչյանի թարգմանությամբ հայերեն ու վրացերեն լույս են տեսել վրաց դասական բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլու «Հատընտիր», Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառուղ» (Ի.Տատիշվիլու հետ), Սիմոն Շանշիաշվիլու «Արսեն», «Խեղճերի Գոչա», Սերգո Կլեյնշվիլու «Հերոսների սերունդը», «Սասունցի Դավիթ» ստեղծագործությունները, Կոնստանտին Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը», ինչպես եւ՝ «Նացարքեթիա», «Կեցխովելի» եւ այլ մշակավոր գործեր: Սուրեն Ավչյանի պրպտում ու ջանասեր աշխատանքի արդյունք են «Թբիլիսիի եւ հայ գրա-

կանությունը», «Մի թուցիկ՝ հայ մանուկներին՝ Աղաբաբի մասին», «Մ.Ջավախիշվիլին եւ հայ իրականությունը», «Փշավելան ու հայ իրականությունը» եւ բազմաթիվ նման թեմաների նվիրված գրական հոդվածներ, որ տպագրվել են ժամանակի մամուլի էջերում: 1961թ.-ին նա վրացերեն լեզվով հրատարակեց «Վրաց-հայկական թատերական փոխհարաբերությունները» արժեքավոր աշխատությունը, որի մեջ ուսումնասիրված է հայ եւ վրաց թատրոնների պատմությունը՝ 19-րդ դարի կեսերից մինչեւ 20-րդ դարի 60-ականները: Այդ կարեւոր աշխատության մասին ժամանակի մամուլում Վրաստանի եւ Հայաստանի թերթերում, հրատարակվեցին դրական արձագանքներ («Գրական թերթ», 1962թ., «Սովետական Վրաստան», 1961): Նշենք նաև, որ Սուրեն Ավչյանի գրական նվիրված գործունեությունը անկասկած չի մնում, 1941-46 թվականներին Սուրեն Ավչյանը ղեկավարում է Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը, իսկ 1956-61 թվականներին զբաղեցնում է մասնաճյուղի նախագահի տեղակալի պաշտոնը: Սուրեն Ավչյանը վախճանվեց 1985 թ.-ին, Թբիլիսիում, նրա աճյունը ամփոփված է Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների հուշիվանքի պանթեոնում: **ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՊԱՆՅԱՆ**

Սուրեն Ավչյանը իր գրական առաջին քայլերն սկսեց 20-րդ դարի 30-ական թվականներին, հետզհետե հասունանալով, ձեռք բերելով իր յուրահատուկ պոետական ձայնը: Այդ ձայնը, ըստ թբիլիսցի այն ժամանակվա ճանաչված գրականագետ, պրոֆեսոր Արտաշես Մխիթարյանի՝ «...ճիշտ է, ավելի չէ, քան պոետական խմբերգի շարքային երգ-

չի ձայն եւ մնում է համեստ կարողությունների դրսևորման աստիճանի վրա, սակայն անկեղծ է եւ՝ ընդհանուր ոգեշունչ, խանդավառ շինարարական-ստեղծագործական մթնոլորտի արձագանք»: Հասարակական տեղաշարժերի այդ բուն շրջանում՝ բարգավաճում ու ծաղկում են ծննդավայր Վրաստանն ու հայրեն-



ԿԱՐ ԱՅՍՊԻՍԻ ՃԱՆԱԳՎԱԾ ՈՒ ՍԻՐՎԱԾ ԴՈՒԴՈՒԿԱԶԱՐ՝ ՍԱՄՍԱՐԻՉ

Այս տաղանդավոր ախալքալաքցու, ժողովրդի սերը վայելող երաժիշտ-դուդուկահարի մասին շատ է գրվել, սակայն եղածը շատ քիչ է՝ նրա երաժշտական կարողություններն ու մարդկային արժանիքներն ընթերցող հանրությանը ներկայացնելու համար:

գի տակ երգում ու պարում էին»,- հիշում էին նրա հասակակիցերը: Եվ, իրապես, պատանի Հարությունը շուտով հայտնի է դառնում նախ՝ որպես անգուզական շվիհար եւ ապա՝ ծիրանի փողի դուդուկի մշակավոր վարպետ: Ծիրանի հրաշքը կարծես զգում է ինքնուս վարպետի սպիտակ, մոմանման մատների ճարպիկ խաղը եւ՝ հնազանդորեն ներառում նրան իր կախարդական աշխարհը: Շուտով մոտ ու հեռու գյուղերի հարսանիքների զարդ, ապագա անվանի երաժշտի համբավը տարածվում է գյուղի սահմաններից դուրս: Նրան պարբերաբար սկսում են հրավիրել Ախալքալաքի եւ 1930-ական թվականների վերջերից մինչեւ իր բովանդակալից կյանքի ավարտը ղեկավարում է նախ՝ քաղաքային, ապա՝ շրջանային ակումբի երաժշտական խմբերը: Շուտով Հարությունյանի ղեկավարությամբ խումբը հանդես է գալիս շրջանային եւ հանրապետական ժողովրդական գործիքների եւ երգի հանրապետական փառատոների: Նրա զուռնայի ախորժալուր հնչյունների տակ՝ ակումբի պարախումբը ներկայացնում է հայ ազգային «Հետ ու առաջ» պարը՝ 1938թ.-ին՝ հիացնունք պատճառելով Թբիլիսիի խստապահանջ հանդիսականներին: Հարություն Հակոբին հայ անվանի գուսանների՝ Հավասու, շատ հաճախ նաև Աշոտի եւ Շահենի շրջիկ համերգների մասնակիցն էր, հռչակված դուդուկահարներ Լեւոն Մարդյանի, Վլադիմիր Հարությունյանի եւ Վաչե Հովսեփյանի մտերիմը եւ իր նվագով հետ չէր մնում նրանցից: Տողերիս հեղինակը, որ հանգամանք-

ների բերումով Ախալքալաքի ակումբի երգ ու պարի խմբում էր, այսօր էլ ակնածանքով հիշում է վերապրում է Հարութ Սամսարցու՝ հայ ժողովրդական բայաթների, Կոմիտասի «Դէ յաման»-ի, Սայաթ-Նովայի «Դուռն էն զըլխեն»-ի եւ բազում այլ կատարումները: Մեծավաստակ Հարութ Սամսարցին աշակերտների մեծ բազմություն է թողել, որոնց մեջ առանձնապես մշակավորվել են Սոս Ռստակյանը, հանրահայտ Գոգուչը (Գուրգեն Սողոյան), Վոլոդյա Խաչատրյանը: Ցավոք, Սոսի դուդուկի ձայնը պատերազմով լռեց, Գուրուչը եւ Վոլոդյան էլ անժամանակ դեռ իրենց խոսքը լրիվ չասած, հրաժեշտ տվին կյանքին՝ մեծ ցավ պատճառելով իրենց երկրպագուներին: 1950-ական թվականների վերջերին անվանի վարպետը հրավիրվում է Երևանի ռադիոտուն՝ ծայնագրվելու, սակայն, ցավոք, մեր պրպտումները՝ գտնելու եւ հանրությանը ներկայացնելու գրանցված ժապավենները, անարդյունք եղան, թեև դեռ կարելի է հուսալ, որ, ի վերջո, դրանք կգտնվեն: Վարպետ Հարութը մեծ հեղինակություն վայելող մարդ էր իր հստակ քաղաքացիական դիրքորոշմամբ: Նա շոյալ էր իր արվեստով եւ անսակարելի աշխատավարձի հարցում, ինչպես եւ՝ հարսանիքներում, շրջիկ համերգներում: Հյուրընկալ էր նրա օջախը, սեղանը՝ բաց: Վարպետը հինգ զավակների նվիրյալ հայր էր, բազում թոռների ու ծոռների սիրված պապիկ: Նրա թիֆլիսաբնակ, անվանի կարճետիստ Պարույր որդու օջախը արվեստի ու գիտության իսկական գանձատուն էր: Այս օջախի ծնունդ

է քննիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր՝ 2006թ.-ից ՀՀ Ակադեմիայի թղթակից անդամ Սեւան Դավթյանը, որն իր կյանքի ընկերուհու՝ դոկտոր-պրոֆեսոր Անահիտ Տոնոյանի հետ համահեղինակ է ինչպես բազում գիտական հոդվածների, բրոշյուրների, այնպես էլ՝ հերթական ծանրակշիռ «Նախնախնորհների հիմնադրույթները» աշխատության: Նրա ղեկավարությամբ գիտական թեզեր են պաշտպանել 32 թեքնածուներ եւ 15 դոկտորներ: Սեւան Դավթյանը նաև մի շարք ակադեմիաների պատվավոր անդամ է: Ամբողջ գիտնականն այսօր էլ մեծ նվիրումով է աշխատում Երևանի Ազգային ակադեմիայի ճարտարագիտական համալսարանում (Պոլիտեխնիկ)՝ ղեկավարելով նրա բաժնից մեկը: Գիտնական թոռը ակնածանքով, մի առանձին հպարտության ու երախտագիտության զգացումով է արտահայտվում իր սիրելի պապի մասին եւ՝ ավելացնում, որ նա առհասարակ հոգատար էր բոլոր նրանց նկատմամբ, ովքեր զգում էին նրա աջակցության կարիքը: Ահա թե ինչու, յուրաքանչյուր սամսարցու, ախալքալաքցու եւ ընդհանրապես ջավախքցու համար ընթրիմակելի եւ անմոռաց է Դավթյան գերդաստանի նահապետ, Ջավախքի բլբուլ Հարութ Սամսարցին: **Վերջում, «Վրաստան» թերթի ընթերցողին հայտնեն, որ գրեթե պատրաստ է հրատարակության իմ հեղինակային գիրք-հուշապատումը՝ նվիրված Մեծ Սամսար, Փոքր Խանջալի, Թոկ գյուղերին:**



ԿԱԶԱԳԱՆ ՈՍՏԱԿՅԱՆ
Ք.Ախալքալաքի

ՀԱՐՑ - ՊԱՏՎԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՐԱՎԱԿԱՆ

Ո՛Վ ԿԱՐՈՂ Է ՍՏԱՆԱԼ ԱՆՎՃԱՐ ԱՆՁՆԱԳԻՐ

Վերջերս թերթում կարդալի որ քաղաքայինների առանձին կարեգորհանների համար...



S.Սարգսյան

Բոլորիսի

Պետական ծառայությունների զարգացման գործակալության կայքում զետեղված է տեղեկություն...

ծի 50% զեղչ, այսինքն, եթե անձնագրի հիմնական վճարը 100 լարի է...

Օտար երկրի քաղաքացիները, ովքեր Վրաստանի կանոնադրության համաձայն ստացել են քաղաքացիություն...

18 տարեկան անձանց համար նախատեսված է 50% զեղչ:

Այն ուսանողների համար, ովքեր ստացել են ինքնության վկայականը ուսանողի կարգավիճակով...

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԳՅՈՔ...

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՉՍԵՐՈՒԿԻ ՄԱՍԻՆ



Չմերուկի հայրենիքը Հարավային Աֆրիկան է: Չմերուկը հաստ կեղևով է հյութեղ պտղամսով...

ՀԵՏԱՔՐԻՐ Է...

ՏԻԵՁԵՐՔԻՑ ՀԱՍԱԾ ԼՈՒՐԵՐ

Գիտնականներին հաջողվել է բացահայտել մի երեւոյթ գրանցել, տիեզերական սեւ անցքը բզկտել ու կոչ է տվել մի ամբողջ աստղ: Դա տեղի է ունեցել 3,8 միլիարդ տարի առաջ, սակայն, այդ աղետի արտացոլանքները նոր են հասել երկիր:



Նախ՝ պետք է հասկանալ. թե ինչ են իրենցից ներկայացնում սեւ անցքերը: Ժամանակակից գիտության մեջ ընդունված է համարել, որ դրանք տիեզերական հսկայական մարմիններ են, որոնց զանգվածն այնքան մեծ է, որ դրանց ձգողականության ուժը նույնիսկ լույսն է կլանում: Իհարկե, այդ պատճառով սովորական հեռադիտակով այդպիսի օբյեկտները հնարավոր չէ տեսնել: Գիտնականները սովորել են դրանց դիրքը որոշել տարբեր կողմնակի նշաններով: Օրինակ, երբ սեւ անցքի մեջ տիեզերական գազ է ընկնում, այն տաքանում է և լույս է արձակում, որով էլ կարելի է հասկանալ, որ տարա-

ծության այդ կետում ինչ-որ բան կա: Նման գոյացություններ հանդիպում են գալակտիկաների մեծ մասում, այդ թվում՝ նաև մեր գալակտիկայում, եւ դրանց զանգվածը միլիոնավոր, երբեմն միլիարդավոր անգամ գերազանցում է աստղերի զանգվածը: Մինչ այդ գիտնականները կարող էին միայն ենթադրել, թե ինչ տեղի կունենա, եթե որեւէ աստղ հայտնվի սեւ անցքի ձգողականության դաշտում: Հիմնա նրանք 3,8 միլիարդ տարի առաջ տեղի ունեցած այդ իրադարձությունը տեսել են սեփական աչքերով, եթե, իհարկե, դա կարելի է այդպես համարել:

Եւ կարելի է հասկանալ, որ տարա-

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԻ ՓՇՈՒՐ՝ ՄԱՐԴՈՒՆ

Ի՞նչ է իրենից ներկայացնում ժամանակը՝ որպես ֆիզիկական հասկացողություն:

Մարդկության համար այս կարեւորագույն հարցերից մեկին մինչ օրս ոչ ոք չի պատասխանել, քանի որ ժամանակն այնպիսի առանձնահատկություններով է օժտված, որոնք ոչ մի կերպ չեն տեղավորվում մեր կարծրատիպային պատկերացումների մեջ: Այդ պատկերացումներում ժամանակը մեզ ներկայանում է որպես շարժվող նյութի անդադար մի ուղղությամբ եւ հավասարաչափ հոսող ձեւերից մեկը: Մենք սովորել ենք այն չափել, բայց թե իրականում ի՞նչ ենք չափում, այդպես էլ մեզ համար զարդանիք է մնացել: Այնուամենայնիվ, մեր պատկերացումները ժամանակի, որպես կյանքի արագընթաց գետի,



մասին, դեռևս մանկուց են ձեւավորվում: Մարդիկ միշտ երագել են երկարացնել իրենց կարճ գոյությունը ու չեն հասկացել, թե ինչու մարդուն բանականություն տված Աստված նրան նաև անմահություն չի շնորհել:

Գիտնականները երկարակյացներից ամենաերկարակյացը ճապոնացի Սիգեհիդո Իձումին է եղել, որն ապրել է 121 տարի: Ոչ պաշտոնական ռեկորդը Լի Չունգունինն է, որը մահացել է 1936 թվականին՝ 246 տարեկան հասակում եւ այդի է թողել իր 24-ամյա կնոջը: Իսկ ըստ Արիստոտելից հասած տեղեկությունների, Կրեոտե կղզուց մի քուրմ ապրել է մինչև 300 տարի:

հղ Լի Չունգունինն է, որը մահացել է 1936 թվականին՝ 246 տարեկան հասակում եւ այդի է թողել իր 24-ամյա կնոջը: Իսկ ըստ Արիստոտելից հասած տեղեկությունների, Կրեոտե կղզուց մի քուրմ ապրել է մինչև 300 տարի:

ՆԵՐՇՆՉՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Կան այնպիսի մարդիկ, որոնք համոզված են, թե իրենց մոտ առկա է որեւէ հիվանդություն՝ չնայած իրականում այդպես չէ եւ, հետազոտությունից հետո, որեւէ հիվանդություն չի հաստատվում:



Այդպիսի վիճակները մասնագետները կոչում են ներշնչումային հիվանդություն, որն ավելի շատ բնորոշ է անհանգիստ, կասկածամիտ, իրենց զգացողությունների հանդեպ ուշադիր եւ տպավորվող անձանց: Ներշնչումային հիվանդությունն իրենից ներկայացնում է հոգեծին հիվանդության տարատեսակ, որը բնորոշվում է կողմնակի ներշնչման կամ ինքնաներշնչման ազդեցությամբ: Այս հիվանդությունը դրսևորվում է կաշուն վախերի ձեւով: Այսինքն՝ մարդը լսելով մահացու ելքով հիվանդության մասին, պատմություն կամ բժշկական թեմայով հանրամատչելի գրականություն կարդալով՝ լցվում է տագնապի զգացողություններով: Կարճ ժամանակ անց՝ ի հայտ է գալիս տհաճ զգացողություն, որ, տվյալ անձի կարծիքով, նման է այն հիվանդությանը, որն ինքը նկատել է այլ մարդու մոտ կամ լսել դրա մասին: Դիմում է բժիշկներին, պահանջում է կրկնակի հետազոտություններ անցկացնել, ստիպում է իրեն վիրահատել, դիմում է ինքնաբուժման: Միաժամանակ, կարդում է հատուկ բժշկական գրականություն եւ նրան թվում է, որ հիվանդության նկարագրությունը համապատասխանում է իր տառապանքին: Այդ շրջանում տառապող իսկական

հիվանդի տպավորություն է թողնում: Աստիճանաբար դրությունն այնքան է վատանում, որ, իրոք, առաջանում են ենթադրյալ հիվանդ օրգանի ֆունկցիոնալ խանգարումներ:

Ներշնչումային հիվանդություններով տառապող անձը պահանջում է շրջապատող մարդկանց հատուկ ուշադրությունը, իսկ բուժումը անպայման պետք է կատարի հոգեբույժը: Հիվանդի հարազատները պետք է նրա համար ստեղծեն հանգիստ պայմաններ՝ չվիրավորելով նրան իր հիվանդության անճշմարտացիության համար: Ներշնչումային հիվանդություններով տառապողներին երբեք չպետք է ծաղրի առարկա դարձնել: Հարկավոր է իմանալ, որ այդպիսի հիվանդը տառապում է անկեղծորեն՝ եւ կրկնակի՝ կարծեցյալ հիվանդություններից, եւ մերձավորների կարեկցանքի ու օգնության բացակայությունից:

ԹԵՎԱՎՈՐ ԱՏՔԵՐ

- ✓ Ընկերներ չունենալը մեծ դժբախտություն է: Ավելի մեծ դժբախտություն է կեղծ եւ ծախս ընկերներ ունենալը:
✓ Ոչ մի դեպքում հույս մի տուր, եթե այն չես կարող արդարացնել:
✓ Եթե դիպել ես հոգուն, արդեն պատասխանատու ես նրա համար:
✓ Լցված սիրտը չի կարող կշռադատել բառերը:
✓ Վրդովվելու ընդունակությունը յուրաքանչյուր ազնիվ մարդու զինավառության կարեւորագույն մասն է:
✓ Սրտի հանգստության համար՝ լավագույն միջոցը մտքի աշխատանքն է:
✓ Մենք չգիտենք այն կրթերի լեզուն, որոնցով չենք ապրում:
✓ Միայն խանդավառ հոգիներն են կարողանում պայքարել ու հաղթել: Բոլոր մեծ ջանքերը, բոլոր վեհ գործերը պատկանում են նրանց: Սառը դատողությունը ոչ մի գեղեցիկ բան երբեք չի կատարել:
✓ Պետք է լինել մի քիչ նման՝ միմյանց հասկանալու համար, բայց պետք է լինել մի քիչ տարբեր՝ միմյանց սիրելու համար:
✓ Եթե ճշուն է հպարտությունը, նշանակում է սերը լռում է:
✓ Մի՛ փորձիր խոսել, երբ ես քեզ ընդհատում եմ...
✓ Ով խոստանում է՝ դառնում է պարտատու:
✓ Կիրքը խելքի արբեցումն է:
✓ Նա, ով առողջ է, նա եւ՝ երիտասարդ է:
✓ Հեղինակություն ստեղծելու եւ այն ամրապնդելու համար՝ առնվազն քսան տարի է պահանջվում, իսկ այն կործանելու համար՝ հինգ րոպեն էլ բավական է: Եթե դուք լրջորեն գիտակցեք դա, կատարվող աշխատանքի նկատմամբ ձեր մոտեցումներում ինչ-որ բան կփոխվի:
✓ Ես չեմ կարող սպասել, որ հաջողությունն ինքը բարեհաճի ինձ այցելել, այդ պատճառով ես անհապաղ կսկսեմ նրան ընդառաջ շարժվել:
✓ Հիմար մարդկանց արած կշտամբանքը՝ նույն գովասանքն է:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «100 ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆՔ ԵՐԿՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ»

Օգոստոսի 16-ին անցկացվեց Հայաստանի կառավարության հերթական նիստը: Նիստի մեկնարկին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանրագումարելով իր գլխավորած կառավարության առաջին 100 օրվա գործունեության արդյունքները, հանդես եկավ հատուկ հայտարարությամբ:



«Լրանում է մեր կառավարության գործունեության 100 օրը, եւ ես ուզում եմ արձանագրել հետեւյալը. այս 100 օրվա ընթացքում մենք լուծել ենք մեր հիմնական խնդիրը, այն է՝ ապահովել ենք ետ-հեղափոխական շրջանում երկրի բնականոն գործունեությունը եւ տնտեսության բնականոն շարունակական զարգացումը:

Եվ, իմ կարծիքով, 100 օրվա ժամանակաշրջանից հետո, մենք թեւակոխում ենք մի նոր փուլ, եւ այդ փուլի հիմնական իմաստը բարեփոխումները ֆորսաժի ենթարկելն է, այսինքն՝ շատ արագ եւ արդյունավետ բարեփոխումներ անելը, որպեսզի մեր երկրի եւ տնտեսության համար նոր շունչ բացվի, երկրորդ արագությունը բացվի, որպեսզի մենք կարողանանք մաքուր բյուջետային քննարկումների համատեքստում արդեն շատ կոնկրետ հեռանկարներ եւ արդյունքներ արձանագրել»:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 100 ՕՐՎԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



Նորաստեղծ կառավարության գործունեության առաջին ամփոփումը, սովորաբար, կատարվում է 100 օրվա շրջանակներում: Անշուշտ, 100 օրը քիչ ժամանակահատված է կառավարության գործունեության, մասնավորապես տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման համար: Այնուհանդերձ, այդ ընթացքում արձանագրված ցուցանիշները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել նախնական վիճակի վերաբերյալ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (SU3). 2018թ. հունվար-հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 8.9%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ արագանալով 3.8 տոկոսային կետով:

Միգրացիա. 2018 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՀ սահմանահատումների բացասական հաշվեկշիռը 6 անգամ նվազել է 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, եւ սա շնորհիվ մուտքային սահմանահատումների թվի ավելացման:

Ջրուսաշրջություն. Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը 2018թ.-ի առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, աճել է 10.2%-ով:

Հատկանշական է, որ Հայաստանից կապիտալի էական արտահոսք չի եղել, եւ միաժամանակ կարելի է փաստել, որ երկրում բարելավվել է գործարար միջավայրը:

«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԽՄԲԻ ԵՐԿՐՈՒ ԱՆՊԱՆԵՐԸ ԱՎՏՎԵՑԻՆ ԱՐՊԱՏՎԱԿՈՐՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանն կալանքից ազատ արձակեց «Սասնա ծռեր» խմբի անդամներ Վարուժան Ավետիսյանին ու Արայիկ Խանդոյանին: «Հայաստանի Աժ «Ծառուկյան» խմբակցության մի խումբ պատգամավորների անձնական երաշխավորությամբ փոխվել է նրանց խափանման միջոցը: Վարուժան Ավետիսյանը հայտնեց, որ իրեն լավ է զգում, բայց անհանգստանում է բանտում գտնվող իր

մյուս ընկերների համար: «Սասնա ծռեր» խմբի ազատ արձակված անդամները հայտնեցին, որ ուղեւորվում են Հանրապետության հրապարակ՝ մասնակցելու հանրահավաքին:



Նիկոլ Փաշինյանի հրավիրած

ՈՐԲԵՐՑ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԱԶԱՏ Է ԱՐՉԱԿԿԵԼ

Օգոստոսի 13-ին Հայաստանի վերաքննիչ քրեական դատարանի կողմից բավարարվել է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպանների բողոքը: Ինչպես նշեց Ռոբերտ Քոչարյանի պաշտպաններից Ռոբերտ Սահակյանը՝ «Վերաքննիչ դատարանը վերացնում է Ռոբերտ Քոչարյանին կալանավորելու որոշումը՝ հաշվի առնելով այն, որ Ռոբերտ Քոչարյանն անձեռնմխելի է»:

Նշենք, որ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը փոխելու համար ստորագրահավաք էին իրականացրել Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորները: Ստորագրահավաքին միացել էր 45 պատգամավոր, սակայն Գլխավոր դատախազությունը մերժել էր Քոչարյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ պատգամավորների ստորագրություններով երաշխավորագիրը:

Հիշեցնենք, որ 2008 թվականի մարտի 1-2-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քրեական գործով ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանին եւ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, ՀԱԿԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին մեղադրանք է առաջադրվել այն բանի

համար, որ նրանք այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ տապալել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը: Միքայել Հարությունյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել, Յուրի Խաչատուրովը 5 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ է արձակվել, իսկ Ռոբերտ Քոչարյանը կալանավորվել էր: Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները բողոքարկել էին կալանավորման որոշումը:

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՊՕՐԻՆԻ Է

Հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանը մանրամասնել է ծառայության տարածած հայտարարությունն այն մասին, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը վերացնելու վերաքննիչ դատարանի որոշումն ապօրինի է, իսկ վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից:

«Դատարանը մեղադրանքին չպետք է անդրադառնար: Նա կարող էր մեղադրանքին անդրադառնալ միայն այն դեպքում, երբ լիներ ակնհայտ անհամապատասխանություն առաջադրված մեղադրանքի բովանդակության եւ նրան առաջադրված քրեական օրենսգրքի հոդվածով նախատեսված հանցակազմների միջեւ»,- ընդգծեց ՀՀԾ պետը:

Հատուկ քննչական ծառայության պետը հույս ունի, որ դատախազությունը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը վերացնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը կբողոքարկի Վճռաբեկ դատարանում եւ Ռոբերտ Քոչարյանը դրա արդյունքում կհայտնվի անազատության մեջ ու չի կարողանա խոչընդոտել գործի քննությանը:

ԱՅՊ ԳՈՐԾԸ ՎՆԱՍԵԼՈՒ Է ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ

Հայաստանի Ազգային ժողովի Հայաստանի Հանրապետական կուսակցություն խմբակցությունը, Ռոբերտ Քոչարյանի դեմ հարուցված քրեական գործի մեղադրանքին եւ կալանավորման որոշման վերաբերյալ հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է, որ այս գործընթացը որեւէ աղերս չունի ժողովրդավարության, իրավունքի գերակայության եւ դատական իշխանության անկախության հետ: Հարուցված գործը խորապես վնասելու է Հայաստանի ներքաղաքական զարգացումներին: Նման անհիմն մեղադրանքով երկրում խրախուսվում են հասարակական պառակտման միտումները, որոնք առավել վտանգավոր են դառնում Հայաստանի եւ Արցախի շուրջ ձեւավորված խիստ մտահոգիչ մարտահրավերների ֆոնին: Հարուցված քրեական գործը խնդրահարույց է օրինականության, հատկապես՝ սահմանադրականության տեսանկյունից, ինչը կարող է նվազեցնել Հայաստանի վարկանիշն ու հեղինակությունը միջազգային, այդ թվում՝ իրավական ատյաններում:

ՎՈՐՉՄՊԵՏԻ ՇԵՐՄԵՆՈՍԱԶՐՈՒՅՁԸ ԵՐՈՒՍԱԳԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏԻՍՐԵԻ ՇԵՏ

Օգոստոսի 13-ին, Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի նախաչեռնությամբ, հեռախոսագրույց է տեղի ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրիան Արքեպիսկոպոս Մանուկյանի միջեւ: Այս մասին հայտնել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության դիվանապետ Հովհանն Բաղդասարյանը:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը որոշել է կրճատել Երեւանի ավագանու լիազորությունների ժամկետը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած օրը Երեւան համայնքում նշանակել եւ անցկացնել Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունները: Համապատասխան որոշմամբ՝ այդ նպատակով կառավարության պահուստային ֆոնդից գումար կհատկացվի Հանրապետության ոստիկանությանը: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարել է, որ ԿԸՀ-ն Երեւանի արտահերթ ընտրությունների օրը կնշանակի որոշման հրապարակումից 30-40-օրյա ժամկետում:

ԳՐԱՆՅՈՒՆ Է ՀՆԱ-Ի ՆՇԱՆԱՎՈՒՄ ԱՋ

Հայաստանի համախառն ներքին արդյունքը 2018թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին, առաջին եռամսյակի համեմատ, գրանցել է 21.7% աճ, իսկ, ընդհանուր առմամբ, 2018-ի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցված աճը կազմել է 7.2%: Ինչպես տեղեկացրին Հայաստանի վիճակագրական կոմիտեից՝ նախնական ցուցանիշների համաչափ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 2.5 տրլն դրամ կամ մոտ 5.1 մլրդ դոլար: Համեմատության համար նշենք, որ 2017թ.-ի առաջին կիսամյակում Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 2.2 տրլն դրամ կամ 4.5 մլրդ դոլար: Նշենք, որ Հայաստանի Կենտրոնական բանկի գնահատականներով՝ 2018թ.-ի ընթացքում ՀՆԱ-ի աճը կազմելու է 4.5-6.5%, իսկ Համաշխարհային բանկի գնահատականներով՝ 4.1%:



ՀԱՅՈՐԳ ՏԱՐԱՎՆԻՑ ԿԱՐՏՈՒՄԻՆ ՈՒ ՀԱՏԻՎՈՒՄՆԵՐԸ ԿԱՊԱՀՈՎԱԿՐՎԵՆ ԿԱՐՎՈՒՄԻՆ ԵՎ ՅՈՒՏԱԶԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ

Հայաստանի գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը, օգոստոսի 15-ին, աշխատանքային այց է կատարել Շիրակի մարզ: Նախարարը եղավ Ազգային համայնքում, որտեղ օգոստոսի 8-ի կարկուտը մեծ վնաս էր հասցրել տեղաբնակչությանը: Արթուր Խաչատրյանը հանդիպել է գյուղացիների հետ, լսել նրանց մտահոգությունները: Նա հավաստիացրեց, որ պետությունը գյուղացուն իր հոգսի հետ միայնակ չի թողնի, այժմ վնասների գնահատման փուլն է: Արթուր Խաչատրյանը, միաժամանակ, տեղեկացրեց, որ հաջորդ տարվանից մեկնարկող գյուղատնտեսության փորձնական ծրագրում ընդգրկվել է նաեւ Շիրակի մարզը, ցրտահարության եւ կարկտահարության ռիսկերից կապահովագրվեն շիրակցիների աճեցրած կարտոֆիլն ու հացահատիկը եւ կորցրած բերքի դիմաց գյուղացին արդեն ոչ թե օգնություն, այլ փոխհարուցում կստանա:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

21.08.2018. Սուրբ Դովակիմի եւ Աննայի՝ Սուրբ Աստվածածնի ծնողների եւ Յուդաբերկանանց հիշատակության օր



23.08.2018.

Սուրբ Երեմիա մարգարեի հիշատակության օր

25.08.2018. Սուրբ առաքյալների Դակորոսի եւ Շնավոնի հիշատակության օր

25.08.2018. Սուրբ առաքյալ Թովմասի հիշատակության օր

ԱՎԱՆԴՈՒՅՑ

ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՎ ԵՈՒՏՈՆ՝ ԴԱՍԱԼԱՅՈՒՄ

Օգոստոսի 12-ին, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղում օրն սկսվեց ու ավարտվեց տոնակատարություններով:

Միջոցառումների շարքը սկսվեց ժամը 11-ին, գյուղի Սուրբ Եսաչ եկեղեցում՝ սուրբ պատարագի մատուցմամբ, որից հետո կատարվեց խաղողօրհնության կարգ եւ ապա օրհնված ողկույզները բաժանվեցին ներկաներին: Դամալացիները եւ գյուղ ժամանած հյուրերը բարձրացան, տեղացիների հավաստմամբ, 13-րդ դարում կառուցված Կողտաբերդ, որտեղ արդեն ծիսակարգ իրականացրեց Վրաց Ուղղափառ եկեղեցու հոգեւորականը: Կողտաբերդի միջոցառմանը հաջորդեց 19-րդ դարի աղբյուր-հուշարձանի վերաբացման արարողությունը: Գյուղի ավագների խոսքով՝ հուշարձանը

կոչվում է Կալերուն աղբյուրը: 40-ական թվականներին, գյուղի այդ մասում հարթ արոտավայրեր կալեր են եղել, այդտեղից էլ առաջացել է անվանումը: Շատ հին աղբյուր է, եւ ջուրը սառն է, մի բերան խմես, անմիջապես կհագեցնաս, հավատացնում են գյուղացիները: Այսօրվա խորհուրդը հայ-վրացական բարեկամությունն է: Նման տոներն են, որ համախմբում են ժողովրդին եւ ավելի ամրացնում բարեկամությունը, աշխատելու ենք, որ ամեն տարի գյուղում նշվելու առիթներ լինեն,- նշեց Երեւանից ժամանած ծնունդով



դամալացի, «ՋԱՅ»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը: Տոնական օրն ամփոփվեց Դամալա գյուղի «Կարին» ազգագրական պարի խմբի կատարումներով:

ՄՊՈՐՏ

ՆՈՆԱ ԳԱՓՐԻՆԴԱՇՎԻԼԻՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ



Նորվեգիայի Դրամեն քաղաքում եզրագիծը հատեց Եվրոպայի շախմատի վետերանների (65 եւ ավելի մեծ տարիքի) առաջնությունը: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ մրցաշարին մասնակից, աշխարհի հնգակի չեմպիոնուհի թբիլիսցի Նոնա Գամպրինդաշվիլին՝ 5,5 միավորով նվաճեց մայրցամաքի չեմպիոնուհու կոչումը: Նույնքան միա-

վոր հավաքեց նաեւ Ռուսաստանի ներկայացուցիչ Ելենա Ֆատալբեկովան, որը, սակայն, վրաց շախմատիստուհուն զիջեց լրացուցիչ ցուցանիշներով: Առաջնության բրոնզե մեդալը բաժին ընկավ Ռուսաստանի ներկայացուցիչ Թամար Խմիադաշվիլուն:

ՔՈՒԹԱՅԻՄԻ «ՏՈՐՊԵՂՈՆ»՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ՓԼԵՅ-ՕՖԻՍ

Ֆուտբոլում Վրաստանի չեմպիոն Քութայիսիի «Տորպեդոն» հաջողությամբ հաղթահարեց որակավորման երրորդ փուլը: Քութայիսցիները երկու հանդիպումների արդյունքներով (5:2 եւ 0:2) պարտության մատնեցին Ալբանիայի չեմպիոն «Կուկուեշ» թիմին եւ ստացան առաջնության փլեյ-օֆին մասնակցելու իրավունք: Օգոստոսի 23-ին եւ 30-ին, սեփական հարկի տակ եւ մրցակցի դաշտում, տորպեդոյականներն իրենց ուժերը կչափեն բուլղարիայի չեմպիոն «Լոդոգորեցի» հետ: Նշենք, որ մինչ այդ, 2011 թվականին փլեյ-օֆին էին հասել Թբիլիսիի «Դինամոն»

եւ «Չեստափոնին»: Եվրոպայի լիգայի մրցաշարում Հայաստանը ներկայացնող «Ալաշկերտ» թիմը, որը ռումինական «Կլուժի» դեմ երկու հանդիպումներում պարտություն կրեց սեփական դարպասն ընդունելով 7 անպատասխան գնդակ (0:2, 0:5), դուրս մնաց մրցաշարի որակավորման երրորդ փուլից:

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԴԻՐՔԵՐՆ ԴԱՅՊԱՆՎԵՑԻՆ



Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) իրապարակեց աշխարհի ֆուտբոլի առաջնությունից հետո վարկանի-

շային առաջին աղյուսակը: Որակավորման նոր սանդղակում Վրաստանն ու Հայաստանը պահպանել են իրենց դիրքերը, համապատասխանաբար, զբաղեցնելով 96 եւ 100-րդ տեղերը: Ինչ վերաբերում է աղյուսակի առաջատարներին, ապա այստեղ նշանակալի փոփոխություններ են վավերացվել: Այսպես, աղյուսակը գլխավորել է աշխարհի նոր չեմպիոն Ֆրանսիայի ազգային ընտրանին: Այն նախորդ աղյուսակում յոթերորդն էր: Նոր սանդղակում երկրորդ տեղը զբաղեցրել է Բելգիայի թիմը, երրորդը՝ բրազիլացիներն են: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Խորվաթիայի, Ուրուգվայի, Անգլիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի եւ Դանիայի թիմերը: Նշենք, որ ամենանշանակալի ետընթացն ունեցել է Եգիպտոսի թիմը, որը 45-րդ հորիզոնականից տեղափոխվել է 65-րդ տեղը, իսկ աշխարհի 2014 թվականի չեմպիոն Գերմանիան, նախորդ աղյուսակի առաջին տեղը փոխարինեց ներկայիս 15-րդ հորիզոնականով:

Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 58 in a grid pattern.

Large advertisement area with text and graphics, including the word 'WORLD' in large letters and various promotional messages.

Footer area with contact information for VRASTAN, including phone numbers, website, and address in Tbilisi, Georgia.